ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/1/2
N 11/349-2019

Գ2

ք. Երևան «25» 12 2019թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Գևորգյան և Ներսիսյան ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ե. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Աշխատանքային տարածքների կառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ 335 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-

ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **10 650 000 (տաս միլիոն վեց հարյուր հիսուն հազար)** << դրամ, որից **1 775 000 (մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար)** << դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի

կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գևորգյան և Ներսիսյան ՍՊԸ
ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ

Հ/հ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

Տնօրեն

Ե. Գևորգյան

Հավելված թիվ 1
« 25 » 12 2019թ. կնքված
N 1/1 349-2019 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՀԱՓԱԲԱԺԻՆ 2
<<ՀՀ ԱԱԾ ՍԶ 5070 Զ/Մ ջոկատի տարածքում պահեստի կառուցման>>
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

h/h	Աշխատանքների անվանումը	Չ/մ	Քանակ	Միավորի ընդ.արժ ՀՀ դրամ	Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
	1.Շինարարական աշխատանքներ				
	Հողային աշխատանքներ			-	-
1	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով, բարձելով ա/ինքնաթափերի վրա	մ³	24,000	653,64	15687,33
2	Ավելորդ բնահողի տեղափոխում 1 կմ	տն	44,400	808,05	35877,30
3	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	5,000	4478,81	22394,04
4	3-րդ կարգի բնահողի ետլիցք ձեռքով	մ³	5,000	1297,47	6487,34
	Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ			0,00	0,00
5	B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ | 10սմ հաստությամբ	մ³	3,000	34412,47	103237,42
6	Միաձույլ ե/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-20 դասի բետոնից	մ³	12,700	52061,12	661176,20
7	A 500c դասի ամրանի արժեքը	տն	0,468	386732,01	180990,58
8	Ac1 դասի ամրանի արժեքը	տն	0,230	394205,69	90667,31
9	B-15 դասի բետոնե ժապավենային հիմքի պատրաստում	մ³	3,000	50643,14	151929,41
10	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-20 դասի բետոնից	մ³	4,500	98749,59	444380
11	A 500c դասի ամրանի արժեքը	տն	0,432	386732,01	167068,23
12	Ac1 դասի ամրանի արժեքը	տն	0,140	394205,69	55188,80
13	I Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնից	մ³	5,200	82736,11	430227,77
14	A 500c դասի ամրանի արժեքը	տն	0,570	386732,01	220437,25
15	Ac1 դասի ամրանի արժեքը	տն	0,293	394205,69	115502,27
16	Ներդիր թերթապողպատ	տն	0,055	613454,55	33740,00

17	Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-20 դասի բետոնից	մ³	0,650	69456,19	45146,52
18	A 500c դասի ամրանի արժեքը	տն	0,044	386732,01	17016,21
19	Ac1 դասի ամրանի արժեքը	տն	0,016	394205,69	6307,29
20	| Միաձույլ ե/բ եզրապատի պատրաստում B-20 դասի բետոնից	մ³	1,500	69456,19	104184,28
21	A 500c դասի ամրանի արժեքը	տն	0,095	386732,01	36739,54
22	Ac1 դասի ամբանի արժեքը	տն	0,028	394205,69	11037,76
23	Միաձույլ ե/բ ծածկի սալի պատրաստում B-20 դասի բետոնից	մ³	5,700	64881,81	369826,30
24	A 500c դասի ամրանի արժեքը	տն	0,461	386732,01	178283,46
25	Ac1 դասի ամրանի արժեքը	տն	0,020	394205,69	7884,11
26	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0,076	462516,56	35151,26
	ճարտարապետաշինարարական մաս				
27	Կ/ձևի տուֆ քարից պատերի շարվածք 20սմ հաստությամբ	մ³	22,38	22021,29	492836
28	20սմ հաստությամբ բետոնե բլոկներից միջնապատերի պատրաստում , անցքերի բետոնացմամբ և ամրանավորմամբ	մ³	4,800	37588,41	180424,37
29	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0,048	462516,56	22200,79
30	10 սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ²	15,500	4127,84	63981,50
31	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0,031	462516,56	14338,01
32	խարամի ջերմամեկուսիչ շերտի պատրաստում	մ³	6,400	7535,81	48229,17
33	Տանիքածածկույթի տակ փայտամածի պատրաստում /ծպեղ, կանգնակ, թեքան, մաուէռլատ/	մ³	0,715	264547,86	189151,72
34	Տանիքածածկույթի պատրաստում 0.55մմ հաստությամբ ց/պրոֆիլավոր թիթեղից կավարամածի և հոծ կամարամածի պատրաստումով ԿՊ-25-0.55մմ	մ²	48,000	6917,74	332051,50
35	Փայտամածի հակահրդեհային պաշտպանություն	մ³	1,700	12287,61	20888,94
36	Կավարամածի հակահրդեհային պաշտպանություն	մ²	48,500	397,57	19282,33
37	Կավարամածի մշակում հականեխիչ նյութով	մ²	48,500	1053,93	51115,70
38	Ներքին պատերի լավորակ ց/ավազե սվաղի իրականացում	մ²	140,000	1793,33	251065,67

39	Մուտքի մետաղական դռների տեղադրում	մ²	7,56	36900,78	278970
40	Մետաղապլաստե դռների տեղադրում	մ²	3,360	42198,11	141785,65
41	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /բացվող/ 0.6x0.6x4	մ²	1,440	36067,51	51937,22
42	Պատերի երեսպատում հախճասալով H=1.5մ բարձրությամբ	մ²	40,590	6511,17	264288,52
43	Պատերի և առաստաղի սոսնձաներկում	մ²	151,000	176,61	26668,42
44	Կախովի պլաստմասե առաստաղների իրականացում	մ²	16,000	4968,88	79502,04
45	Բնահողի տոփանում խճով հատակների տակ	մ³	3,500	14267,91	49937,69
46	B-15 դասի բետոնից նախապատրաստական շերտ	մ³	4,500	42662,20	191979,88
47	Շինության շուրջը սալվածքի իրականացում B 15 դասի բետոնից	մ³	4,150	43948,19	182385,00
48	30 մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ²	39,200	1347,59	52825,43
49	հատակների երեսպատում կերամիկական սալիկներով	մ²	16,000	6681,79	106908,59
50	Արտաքին պատերի լավորակ ց/ավազե սվաղ	մ²	91,000	1629,54	148288,04
51	Արտաքին պատերի լավորակ ներկում ճակատային ներկով	մ²	91,000	923,77	84062,97
52	խճի նախաշերտի իրականացում սալվածքի տակ	մ³	1,900	14267,91	27109,03
53	B-15 դասի բետոնից սալվածքի պատրաստում 8սմ հաստությամբ	մ³	2,800	43948,19	123054,94
	Ջրամատակարարում և կոյուղի				
54	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	22,500	2539,53	57139,42
55	Ավազե նախաշերտի իրականացում խողովակի տակ 10սմ հաստությամբ	մ³	2,500	5014,05	12535,13
56	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	19,000	1061,99	20177,72
57	Ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 1 կմ	տն	6,300	1731,51	10908,53
58	Պոլիվինիքլորիդե խողովակների տեղադրում 100 մմ		50,000	1464,78	73238,91
59	Պոլիվինի քլորիդե խողովակների տեղադրում 50 մմ	գմ	20,000	667,21	13344,19
60	Ակյուն 90° պոլիվինի քլորիդե Φ100մմ	հատ	4,000	1586,49	6345,97
61	Պոլիվինի քլորիդե անցում Φ100 /50	հատ	4,000	1363,20	5452,79
62	Եռաբաշխիչ պոլիվինիքլորիդե 100 մմ	հատ	2,000	2354,23	4708,47
63	Եռաբաշխիչ պոլիվինիքլորիդե 50մմ	հատ	5,000	1801,37	9006,87
64	հոսակի տեղադրում Φ50մմ	հատ	2,000	2149,85	4299,70
65	Նախգծվող Φ 100 կոյուղագծի միացում գործող սեպտիկ հորին	տեղ	1,000	29697,59	29697,59

	Ջրամատակարարում				
66	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	36,000	2539,53	91423,08
67	Ավազե նախաշերտի իրականացում խողովակի տակ 10սմ հաստությամբ	մ³	4,000	5014,05	20056,20
68	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	30,500	1061,99	32390,55
69	Ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 1 կմ	տն	9,900	1731,51	17141,98
70	Պոլիէթիլեն խողովակների տեղադրում Φ25 մմ, փորձարկումով	գմ	80,000	549,01	43920,85
71	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ15մմ, լվացումով, քլորացումով,փորձարկումով	գմ	25,000	2924,46	73111,38
72	Գնդիկավոր փականների տեղադրում Φ 15մմ	հատ	5,000	3530,66	17653,29
73	Լվացարանի տեղադրում	կ-տ	2,000	18318,38	36636,76
74	Տակդիրի տեղադրում	կտ	2,000	25129,32	50258,64
75	Ցնցուղի ծորակ խառնիչի տեղադրում	հատ	4,000	6251,68	25006,71
76	Ծորակի տեղադրում	հատ	2,000	3374,39	6748,78
	Էլեկտրամասակարում				
77	ՊՊՎ 2x3,0 մմ հաղորդալարի անցկացում	գմ	100,000	456,74	45673,82
78	ՊՊՎ 2x4,0 մմ հաղորդալարի անցկացում	գմ	100	588,68	58868
79	Ավտոմատ անջատիչ միաֆազ 25Ա	հատ	3,000	3347,95	10043,85
80	Ավտոմատ անջատիչ միաֆազ 50Ա	հատ	1,000	3736,06	3736,06
81	Անջատիչների տեղադրում	հատ	6,000	1494,70	8968,19
82	Առսատաղային լուսատուների տեղադրում	հատ	12,000	6888,16	82657,97
83	Վարդակների տեղադրում	հատ	8,000	1310,83	10486,66
	Ընդամենը				7923476
	Շահույթ	11%			871582
	Ընդամենը				8795058
	Չնախատեսված ծախսեր	3%			263852
	Ընդամենը				9058910
	ԱԱՀ	20%			1811782
	Ընդամենը				10870692

* Կապալառուն աշխատանքները կատարում է 'Հարավ-Արևելյան սահման' հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ **Ա. Հակոբյան**

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գևորգյան և Ներսիսյան ՍՊԸ
ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ

Հ/հ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

Տնօրեն **Ե. Գևորգյան**

Հավելված թիվ 2
« 25 » 12 2019թ. կնքված
ШП/349-2019 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՉԱՓԱԲԱԺԻՆ 2
<<ՀՀ ԱԱԾ ՍԶ 5070 Զ/Մ ջոկատի տարածքում պահեստի կառուցման>>
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Հողային աշխատանքներ	*Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը*	Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ 335 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:
2	Հիմնային աշխատանքներ		
3	Ե/բետ աշխատանքներ		
4	Պատշարային աշխատանքներ		
5	Մոնտաժային աշխատանքներ		
6	Տանիքային աշխատանքներ		
7	Էլ. մոնտաժային աշխատանքներ		
8	Հարդարման աշխատանքներ		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ **Ա. Հակոբյան**

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գևորգյան և Ներսիսյան ՍՊԸ
ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ

Հ/հ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

Տնօրեն **Ե. Գևորգյան**

Հավելված N 3
«25» 12 2019թ. կնքված
N111349-2019 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնումների ոլորտի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45211193/502	աշխատանքային տարածքների կառուցման աշխատանքներ	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ **Ա. Հակոբյան**

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գևորգյան և Ներսիսյան ՍՊԸ
ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ

Հ/հ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

Տնօրեն **Ե. Գևորգյան**

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

_____
ղեկավարման

_____
դիմող, դիմորթեր

_____
ղեկավարման

_____
դիմող, դիմորթեր

Հաստատեց

Ընդունեց

_____,
ՀՀ ցամաքային զորքերի զինվորական ինստիտուտ

_____
մասնագիտություն

Ընդունեց

Հանձնեց

ՀԱՅՏԱԿ

Սույն թիվ ընդունման կոմիսիայի 2 օրվա նիստերում դիմորդներ է ներգրավվել մասնակցության հետևյալ անձանց:

Անունը	Ազգանունը	Ծննդյան թվականը	Ուսումնական հաստատությունը, որտեղ սովորել է դիմորդը (կամ աշխատանքի վայրը)	Ուսումնական հաստատությունում ավարտած դասընթացները (կամ զբաղեցրած պաշտոնը)	Ռազմական կոչումը

Ընդունվեցին ռազմական ինստիտուտ, ՀՀ զինված ուժերի ՀՀ ցամաքային զորքերի զինվորական ինստիտուտի զինվորական ծառայության ենթակա անձանց ցուցակում հետևյալ անձերը.

_____ N ցուցակի դիմորդներ

_____ թվականի _____ թ. 20 դասընթացների ընդունելության հանձնաժողովի նիստում

(ստորագրություն) Հանձնաժողովի նախագահ, գնդապետ Ա. Սարգսյան

_____ (ստորագրություն) Հանձնաժողովի քարտուղար, գնդապետ Ա. Սարգսյան

Սոկոլով Իգոր Էդուարդի դիմորդներ

_____ թվականի _____ թ.

Լոմբոմանի անձնական գործերի ֆիզիկական ստուգման ենթարկվեցին

_____ N տեղ

_____ անունով, հայրանունով դիմորդներ

_____ թվականի _____ թ.

Հավելված 4.1
զորակոչի հանձնաժողովի
կանոնադրության